«16» մայիս 2023թ. **N 358**

Գործակալության պայմանագրի շրջանակներում իրականացվող գործարքների մասով պրինցիպալի կողմից հաշվարկային փաստաթղթ դուրս գրելու և շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ

Հարց

ՀՀ ռեզիդենտ «Ա» և «Բ» կազմակերպությունները կնքել են միմյանց միջև ապրանքի մատակարարման գործակալության պայամանագիր, համաձայն որի գործակալը գործում է պրինցիպալի անունից և պրինցիպալի հաշվին: Տվյալ դեպքում արդյո՞ք վերոնշյալ ապրանքի մատակարարման գործակալության պայամանագիրը կնքելուց հետո «Ա» և «Բ» կազմակերպությունները կարող են համարվել շրջանառության հարկ վճարող: Վերոնշյալ գործարքի մասով գործակալը կարո՞ղ է գնորդին դուրս չգրել պրինցիպալի անունից հաշվարկային փաստաթուղթ, այլ պրինցիպալը գնորդին դուրս գրի իր անունից հաշվարկային փաստաթուղթը:

Պատասխան

1. ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 55-րդ հոդվածով սահմանված են ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների և գործողությունների փաստաթղթավորման նպատակով կիրառվող հաշվարկային

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

փաստաթղթերի տեսակները: Մասնավորապես, օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հաշվարկային փաստաթուղթը նույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող՝ հարկ վճարողի կողմից դուրս գրվող փաստաթուղթ է, որով հիմնավորվում է ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունք ձեռք բերելը,

- 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով պարտավոր են դուրս գրել օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթղթեր,

- 56-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով ապրանքներ մատակարարող կամ աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող՝ գործակալ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ համապատասխանաբար պրինցիպալի անունից կարող են դուրս գրել հարկային հաշիվներ, ճշգրտող հարկային հաշիվներ, ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվներ, ինչպես նաև հաշիվ վավերագրեր կամ ճշգրտող հաշիվ վավերագրեր, եթե գործակալին տրվել է այդպիսի հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու լիազորագիր: Նույն մասով սահմանված դեպքերում գործակալի կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում, բացի նրանց տվյալներից, լրացվում է նաև պրինցիպալին վերաբերող՝ օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասում նշված տեղեկատվությունը: Նույն հոդվածի 12-րդ մասին համապատասխան՝ ՀՀ կառավարության 05.11.2017թ. N1257-Ն որոշմամբ սահմանված է հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, անվավեր ճանաչման և չեղարկման կարգը:

Միաժամանակ, միջնորդական (հանձնարարության, կոմիսիայի, գործակալության) ծառայությունների մատուցման պայմանագրերին ներկայացվող պահանջները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 40-42-րդ գլուխներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ օրենսգրքի 56-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գործակալության պայմանագրի շրջանակներում իրականացվող գործարքների մասով՝ գործակալը պրինցիպալի անունից կարող է դուրս գրել հաշվարկային փաստաթղթեր, եթե գործակալին տրվել է հաշվարկային փաստաթղթեր

դուրս գրելու լիազորագիր: Եթե պրինցիպալի կողմից հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու լիազորագիր չի տրվել գործակալին, ապա գործակալության պայմանագրի շրջանակներում իրականացվող գործարքների մասով պրինցիպալի կողմից գնորդին դուրս է գրվում հաշվարկային փաստաթուղթ օրենսգրքով սահմանված կարգով:

2. ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի՝

- 1-ին մասին համապատասխան՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) նույն մասով սահմանված դեպքերում և ժամկետներում, եթե նույն մասում նշված ժամկետներում հարկային մարմին են ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն,

- 2-րդ մասին համապատասխան՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 115 միլիոն դրամը,

- 3-րդ մասով սահմանված են այն դեպքերը, երբ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ կազմակերպությունը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, եթե ապահովված լինեն շրջանառության հարկ վճարող համարվելու համար օրենսգրքով սահմանված բոլոր պայմանները: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել, մասնավորապես, ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am